նութիւնը, բարոյականութիւնը և արւեստը։ Ամբողջ մարդը պէտք է հասկացւի իւր բնական և հոգեկան կեանքով՝ որպէս մի միութիւն։ Նորա քննադատութեան եղանակից խիկոյն երեւում է Հեգելի խորը ազդեցութիւնը հեղինակի վերայ, թէպէտ և նա իւր ուսուցչի ստրուկ երկրպագուն չէ, այլ նորանից անգամ վեր է ուզում բարձրանալ։ Գրւածքը պարունակում է բազմաթիւ չատ աջողած մանրամասնութիւններ. մանաւանդ ով ծանօթ է Շաշլերի էսթետիկական գրւածքների հետ, գեղարւեստին վերաբերեալ հատւածը չատ կը գնահատէ։ Այդ հատւածը պարունակում է նուրբ նկատողութիւններ։

---

ՏՐՕՑԲԵՐ, Դ-Ր. ՕՍԿԱՐ, *պրօֆ.*, ԼԻԿԻԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։ *Հ. Կիպերտի մի քարտէզով։ Շտուտգարտ.* 1887, Kohlhammer. (XII+247 *երես, մեծ ութածալ*)։

---

Փոքր ասիական թերակղզին, թէպէտև հնումը բնակավայր էր չատ ազգերի, ունեցաւ սակայն հին դարերի մեծագոյն չրջանում մի պատմութիւն, սկսած պարսիկների նւաճումից մինչ Աղէքսանդր Մեծի յաջորդները և Հռոմի նւաճելուց մինչ Օսմանցոց գալը։ Բայց նախ քան այդ պատմութեան գրելը, պէտք են պատրաստական մասնաւոր աչխատութիւններ։ Մի այդպիսի աչխատութիւն տալիս է հեղինակը Լիկիացոց մասին, որոնց պատմութեան համար հեղինակը իւր 20-ամեայ ուսուցչութեան ալստ ժամերը գործ է դրել նիւթեր հաւաքելու։ Գործը կատարւած է օրինակելի բարեխղճութեամբ։

---

ՇՄԻԴՏ, Դ-Ր. ԷՄԻԼ, *դօցենտ*, ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՕԴՆԵՐ։ *Ուղեցոյց դիտելու ու ժողովելու գործանոցի և ճանապարհորդութեան համար։ Բազմաթիւ նկարներով բնագրի մէջ։ Լայպցիգ,* 1888 *թ., տպարան* Veitet (IV+336 *եր.* imp. 12), *գինը՝* 6 *մարկ։ (Գերմաներէն)*։

---

Այս գիրքը հմուտ մարդիկ խորհուրդ են տալիս ձեռք բերելու նորան, ով մարդաբանական (անթրօպօլօգիական) հետազօտութիւններով է զբաղւած կամ ով դոցա համար նիւթեր է ժողովում։ Հեղինակը ինքը մի